Հաշվետվություն

(Տեղեկանք հիմնավորում)

Տեղ համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան

Տեղ համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 83-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածներով ամրագրված դրույթները:

Տեղ համայնքի 2022թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 302592,166 հազ. ՀՀ դրամ՝ ծրագրված (ճշտված) 286799,103 հազ. ՀՀ դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 105,5%: Ընդ որում վարչական մասով ապահովվել է 248969,762 ՀՀ դրամ ծրագրված (ճշտված) 238021,700 հազ. ՀՀ դրամի նկատմամբ ՝ կազմելով 104,6 %-ը, իսկ ֆոնդային մասով ապահովվել է 53622,403 հազ. ՀՀ դրամ, կազմելով ճշտված՝ 48777,403 հազ. ՀՀ դրամի 90,96 %-ը:

Տեղ համայնքի 2022 թվականի ճշտված բյուջեով սեփական եկամուտները ծրագրվել են 73897,2 հազ. ՀՀ դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 84188,627 հազ. ՀՀ դրամ կամ ամբողջի 113,9%: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը ավել է 2021 թվականի համապատասխան ցուցանիշից 19222,827 հազ. ՀՀ դրամով:

Տեղ համայնքի 2022 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 307684,982 հազ. ՀՀ դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 88,5%-ը: Նախատեսված և փաստացի ծախսված գումարների տարբերությունները հիմնականում պայմանավորված են գնումների գործընթացում առաջացած խնայողություններով, 2022 թվականի սեպտեմբերի 13-ից հակառակորդի կողմից իրականացված լայնածավալ ագրեսիայի հետևանքները վերացնելուն ուղղված ֆինանսական ավելի մեծ միջոցների նախատեսմամբ, և նույն պատճառով չեն իրականացվել նաև մի շարք նախորոք պլանավորված նախագծային աշխատանքներ:

Հարկ եմ համարում նշել, 2016 թվականի խոշորացումից մինչ այսօր 2022 թվականի բյուջեն միակն է, որ եկամտային մասով բացարձակապես զատ է մնացել պակասուրդից (դեֆիցիտից) և տարեվերջում ապահովել է 55608,526 հազ. ՀՀ դրամի հավելուրդ:

Ստորև ներկայացվում է Տեղ համայնքի 2022 թվականի բյուջեի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

Եկամուտներ

Ինչպես նշվեց արդեն Տեղ համայնքի 2022 թվականի փաստացի եկամուտները կազմել են 302592,1 հազ. ՀՀ դրամ: Սրա մեջ ներառված են.

1. Հարկային եկամուտներ՝ կազմում են 57485,4 հազ. ՀՀ դրամ, կամ ամբողջի 19%-ը,մասնավորապես՝
   - Անշարժ գույքի հարկ- 38575.9 հազ. ՀՀ դրամ,
   - Գույքային հարկեր այլ գույքից-17923,0 հազ. ՀՀ դրամ
   - Տուրքեր-986,5 հազ. ՀՀ դրամ:

2. Պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմում են 185770,5հազ. ՀՀ դրամ,կամ ամբողջի 61,4%-ը,
   - Դոտացիա- 164124,5 հազ. ՀՀ դրամ
   - Սուբվենցիա- 21625,2 հազ. ՀՀ դրամ:
3. Այլ եկամուտներ՝ կազմում են 59336,2 հազ. ՀՀ դրամ, կամ ամբողջի 19,6 %-ը
   - Գույքի վարձակալությունից եկամուտներ- 9689,6 հազ. ՀՀ դրամ,
   - Վարչական գանձումներից եկամուտներ- 9900,1 հազ. ՀՀ դրամ,
   - Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ- 31997,2 հազ. ՀՀ դրամ,
   - Այլ մուտքեր- 7749,4 հազ. ՀՀ դրամ:

Ծախսեր

Տեղ համայնքի 2022 թվականի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 307685,0 հազ. ՀՀ դրամի ծախսեր՝ ծրագրված (ճշտված) 347500,4 հազ. ՀՀ դրամի դիմաց կամ ծրագրվածի 88,5%-ը: Փաստացի կատարված ծախսերը եկամուտների տեսակարար կշռում կազմում են 101,68%: Ընդամենը փաստացի ծախսերից 211388,618 հազ. ՀՀ դրամն ուղղվել են ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), իսկ 96296,363 հազ. ՀՀ դրամը՝ կապիտալ բնույթի զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե):

Տեղ համայնքի 2022 թվականի բյուջեի ծախսերի ծավալներում գերակշիռ են ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների կատարմանն ուղղված ծախսերը՝ կազմելով ամբողջ ծախսերի 42,58 %-ը, քաղաքացիական պաշտպանության ոլորտի ծախսերը կազմել են 0.9%-ը, տնտեսական ծախսերը կազմել են 8.8%, շրջակա միջավայրի ծախսերը կազմել են 5.8%, բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ոլորտի ծախսերը կազմել են 14,2%, հանգստի, մշակույթի և սպորտի ոլորտին հատկացվել են 3.8%-ի ծախսեր, կրթության ոլորտի ապահովման համար 23.3 %-ի ծախսեր, սոցիալական պաշտպանության համար կատարվել են 0.6%-ի ծախսեր: